

ՍՈՒՐԵՆ ՇՈՒՇԱՆՅԱՆ

Վիճակագրություն, բակալավրիատ,
2-րդ կուրս

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *yrnypեսական աճի կառուցվածք, կառուցվածքային տեղաշարժեր, առաձգականության գործակից, կոռելյացիոն վերլուծություն*


Սույն հոդվածում ուսումնասիրվել և վերհանվել են ՀՀ տնտեսության կառուցվածքի առանձնահատկությունները, վերլուծվել է ՀՀ տնտեսության ճյուղային կառուցվածքի շարժընթացը 2000-2018 թթ.-ին, ինչպես նաև տնտեսության կառուցվածքի ազդեցությունը տնտեսական աճի վրա ներկայացնելու համար հաշվարկվել են առաձգականության գործակիցներ, որոնց միջոցով գնահատվել է տնտեսության ոլորտների՝ տնտեսական աճին նպաստելու աստիճանը: Բացի այդ, ՀՀ տնտեսության կառուցվածքային կերպափոխությունների ինտենսիվությունն ավելի ակնառու դարձնելու համար գնահատվել է կառուցվածքային տեղաշարժերի ազդեցությունը տնտեսական աճի վրա:

Ներածություն: Վիճակագրության կողմից ուսումնասիրվող երևույթներն ու գործընթացները, որպես կանոն, բնութագրվում են իրենց ներքին կառուցվածքով, որը ժամանակի ընթացքում կարող է փոխվել: Կառուցվածքի շարժընթացը հանգեցնում է հետազոտվող օբյեկտների ներքին բովանդակության փոփոխությանը, առաջացնում է պատճառահետևանքային կապերի փոփոխություն: Այդ իսկ պատճառով կառուցվածքի և կառուցվածքային տեղաշարժերի ուսումնասիրությունն ունի կարևոր նշանակություն վիճակագրական վերլուծության ժամանակ:

Տնտեսության սոցիալ-տնտեսական կերպափոխությունների արդի փուլում ավելի ու ավելի է կարևորվում կառուցվածքային զարգացման անհրաժեշտությունը, քանի որ տնտեսության կառուցվածքը դիտվում է որպես տնտեսական աճի վրա անմիջականորեն ազդող գործոն: Ժամանակակից տնտեսությունը դինամիկ կերպով զարգացող համակարգ է, որի կառուցվածքի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու դրա կայունության օրենքները և շարժման ներքին ուղղվածությունը:

Մեթոդաբանություն և հետազոտության արդյունքների քննարկում: Հայաստանի տնտեսության ճյուղային կառուցվածքի ձևավորումը տեղի է ունեցել Խորհրդային Հայաստանի տնտեսության կառուցվածքի հենքի վրա: Քանի որ Խորհրդային Հայաստանի տնտեսությունը մեծ չափով հիմնված էր միջհանրապետական կապերի վրա, ապա 1990-ականների սկզբին դրանց խզման և կապիտալիստական տնտեսությունում անկախ Հայաստանի ընդգրկման արդյունքում ոչ բոլոր ճյուղերը շարունակեցին գոյատևել, առավել ևս՝ զարգանալ նախկին ծավալներով: Ընդհանուր առմամբ, եթե փորձենք կառուցվածքային առումով բնորոշել հետխորհրդային Հայաստանի տնտեսության զարգացումը, ապա կարելի է ասել, որ այն արդյունաբերական տնտեսությունից վերափոխվել է ագրարայինի և ծառայություններ մատուցողի:

2002-2007 թթ.-ի ընթացքում արձանագրված ՀՀ երկնիշ տնտեսական աճին նպաստել են տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը: Հատկապես նկատելի էր շինարարության աճի բարձր տեմպը, որը 2007 թ.-ին ապահովել էր ՀՆԱ աճի 31.4%-ը, իսկ ՀՆԱ կառուցվածքում դրա տեսակարար կշիռը հասել էր մինչև 24.5% (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ՀՀ ՀՆԱ կառուցվածքը 2000-2018 թթ.¹

Սակայն, 2009 թ.-ին շինարարության ծավալների մեծ չափով անկումը (41.6%) կազմեց ՀՆԱ անկման 74.5%-ը, և ՀՆԱ կառուցվածքում վերջինիս տեսակարար կշիռը նվազեց մինչև 18.6%: 2010 թ.-ին շինարարության 3.3% աճին հաջորդեցին 2011 թ.-ի 12.2%, 2013 թ.-ի 7.4%, 2014 թ.-ի 4.5%, 2015 թ.-ի 3.1% և 2016 թ. 14.1% բարձր անկումները: 2017 թ.-ին շինարարության ոլորտում նախորդ տարվա համեմատ գրանցվեց 2.5% տնտեսական աճ, որը, սակայն, նախորդ տարիների անկումների խորապատկերում առոչինչ էր: Արդյունքում շինարարության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2015 թ.-ին կրճատվեց մինչև 9.4%, իսկ 2018 թ.-ին կազմեց 6.8% (աղյուսակ 1):

Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ արդյունաբերության զարգացումը ևս ընթացել է տարբեր ուղղություններով և տեմպերով: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ պայմանավորված՝ 2009 թվականին ՀՀ արդյունաբերությունում արձանագրվեց 7.8% անկում: 2010-2013 թթ.-ին ոլորտում գրանցվեց տնտեսական աճ՝ միջինում 8.6%, որին հաջորդեց 2014 թ.-ի 0.9% տնտեսական անկումը: Այն հիմնականում պայմանավորված էր էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում ու հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության տեսակներում արձանագրված տնտեսական անկմամբ: 2015-2018 թթ. արդյունաբերությունում գրանցվեց զգալի տնտեսական աճ՝ տարեկան միջին հաշվով 6.2%:

¹ <https://www.armstat.am/am/?nid=202>

Աղյուսակ 1

ՀՀ ՀՆԱ արտադրության կառուցվածքն ըստ տնտեսական գործունեության տեսակների խոշոր խմբավորումների (փակագծերում՝ ՀՆԱ հավելածին նպաստման չափը, տոկոսային կերպ) 2007-2018 թթ.¹

	2007	2009	2011	2013	2015	2017	2018
Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով)	100	100	100	100	100	100	100
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	10 (3.0)	10.6 (-2.6)	10.9 (0.4)	11.1 (0.4)	10.6 (-0.6)	10.3 (1.0)	10 (3.0)
Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	90.0 (10.7)	89.4 (-11.5)	89.1 (4.3)	88.9 (2.9)	89.4 (3.8)	89.7 (6.5)	89.4 (4.3)
ՖՄԱԶԾ	-1.4 (-0.6)	-1.6 (0.2)	-2.5 (-0.6)	-2.0 (0.1)	-1.8 (0.3)	-1.9 (-0.1)	-1.9 (-0.2)
Գյուղատնտեսություն	18.3 (1.9)	16.9 (1.0)	20.3 (2.4)	18.4 (1.1)	17.2 (2.4)	14.9 (-0.9)	13.7 (-1.3)
Արդյունաբերություն	15.0 (0.5)	13.5 (-0.7)	17.1 (2.1)	16.2 (1.0)	16.3 (1.0)	17.9 (1.2)	17.5 (0.7)
Շինարարություն	24.5 (4.3)	18.6 (-10.5)	13.0 (-2.1)	10.5 (-0.9)	9.4 (-0.3)	7.4 (0.2)	6.8 (0.1)
Առևտուր և ծառայություններ	33.6 (4.6)	42.0 (-1.5)	41.2 (2.5)	45.7 (1.3)	48.3 (0.4)	51.4 (6.1)	53.4 (5.0)

Ի տարբերություն տնտեսության մյուս ոլորտների, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ գյուղատնտեսությունը դրսևորեց հարաբերական կայունություն՝ ունենալով աննշան՝ 0.1% անկում: Սակայն, 2010 թ.-ին տնտեսության այս ճյուղը խոշոր՝ 12.0% անկում ունեցավ՝ պայմանավորված գերազանցապես անբարենպաստ բնակլիմայական պայմանների ազդեցությամբ բուսաբուծության համախառն արտադրանքի ցուցանիշի կտրուկ նվազմամբ: Հաջորդող տարիներին գյուղատնտեսությունում շարունակաբար գրանցվել է տնտեսական աճ: 2015 թ.-ին ճյուղի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 17.2% էր: Սակայն, 2016-2018 թթ.-ին այս ոլորտում պատկերը կրկին փոխվեց, դրսևորվեցին աճի տեմպի բացասական միտումներ և գրանցվեց համապատասխանաբար՝ 5.0%, 5.3% և 7.7% տնտեսական անկում, իսկ ճյուղի մասնաբաժինը ՀՆԱ-ում նվազեց մինչև 13.7%:

ՀՀ՝ 2018 թ.-ի 5.2% տնտեսական աճին մեծապես նպաստել են առևտուրն ու ծառայությունները (5.0 տոկոսային կետ կամ ավելի քան 96 տոկոս): Ինչպես վկայում են 2-րդ աղյուսակի տվյալները, դիտարկվող ժամանակահատվածում կտրուկ աճել է այս ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ 2007 թ.-ի 33.6%-ից 2018 թ.-ին հասնելով 53.4%-ի:

Տնտեսության կառուցվածքի ազդեցությունը տնտեսական աճի վրա ներկայացնելու համար հաշվարկվել է գործակից, որի միջոցով գնահատվել է տնտեսության ոլորտների՝ տնտեսական աճին նպաստելու աստիճանը.

$$E_{ոլորտ} = \frac{\Delta \text{ՀՆԱ}}{\text{ՀՆԱ}} : \frac{\Delta \text{ՀԱԱ}_{ոլորտ}}{\text{ՀԱԱ}_{ոլորտ}}$$

¹ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ տվյալների բազա,

<http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6>

Գործակիցը ցույց է տալիս տնտեսության ոլորտային առաձգականությունը, այսինքն՝ ինչպես է տնտեսական աճն արձագանքում տնտեսության կառուցվածքային փոփոխություններին: Ոլորտն առաձգական է, եթե $E_{ոլորտ} > 0$: Գործակցի տատանման արդյունավետ միջակայքն է՝ $0 < E_{ոլորտ} < 1$: Գործակցի հաշվարկման արդյունքները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 2
Տնտեսության ոլորտային առաձգականության շարժընթացը 2000-2018 թթ.¹


Տարիներ	$E_{գյուղ}$	$E_{արդ}$	$E_{շին}$	$E_{ծառ}$
2000	-3.0	0.7	0.1	-0.5
2001	0.8	2.5	1.8	1.0
2002	3.4	0.9	0.3	0.8
2003	3.3	0.9	0.3	1.1
2004	0.7	5.2	0.7	0.8
2005	1.0	1.9	0.5	1.2
2006	22.6	-22.4	0.3	0.9
2007	1.4	3.6	0.8	1.1
2008	5.5	4.5	0.6	0.8
2009	0	-1.8	0.3	0
2010	-0.2	0.3	0.7	0.6
2011	0.4	0.4	-0.3	0.8
2012	0.7	1.1	1.5	1.1
2013	0.5	0.5	-0.5	0.9
2014	0.4	-5.9	-0.6	0.6
2015	0.22	0.4	-0.9	0
2016	-0.4	0	0	0.1
2017	-1.5	1.1	2.7	0.6
2018	-0.6	1.2	6.5	0.3

Աղյուսակի տվյալները վկայում են, որ եթե մինչճգնաժամային ժամանակահատվածում տնտեսական աճի նկատմամբ առաձգական ոլորտներ էին համարվում շինարարությունն ու ծառայությունները, ապա հետճգնաժամային զարգացումները էականորեն փոխել են տնտեսական զարգացման որակը: Տնտեսական աճի նկատմամբ առավել առաձգական է դարձել գյուղատնտեսության ոլորտը, և դա այն պարագայում, երբ գյուղատնտեսությունն առանձնանում է խիստ արտահայտված ցածր արտադրողականությամբ: Զգալիորեն բարելավվել է արդյունաբերության ցուցանիշը, իսկ շինարարության ոլորտում իրավիճակը շարունակաբար վատթարացել է:

Ինչպես հայտնի է, տնտեսության համախառն ավելացված արժեքը, լինելով երկրի տնտեսության բոլոր ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների հանրագումար, միաժամանակ, այդ ավելացված արժեքների ստեղծմանը մասնակցող ինստիտուցիոնալ հատվածների եկամուտների ամբողջությունն է: Ըստ այդմ՝ տնտեսության մեջ կառուցվածքային փոփոխությունների կարևոր բնութագրիչ է նաև ՀՆԱ ստեղծմանը մասնակցած ինստիտուցիոնալ հատվածների միջև եկամտի բաշխման հարաբերակցության շարժընթացը:

¹ Աղյուսակը կազմել է հեղինակը՝ հաշվարկների հիման վրա:

ՀՆԱ եկամտային կառուցվածքի դիտարկումը ցույց է տալիս, թե երկրում ստեղծված ավելացված արժեքը կամ առաջնային եկամուտը ինչ հարաբերակցությամբ է բաժանվում այդ եկամտի ստեղծմանը մասնակցած վարձու աշխատողների, պետության և ձեռնարկատերերի միջև:



Գծապատկեր 2. ՀՀ տնտեսության համախառն ավելացված արժեքի կառուցվածքը ըստ եկամտի ձևավորման 2007-2017 թթ., %¹

Գծապատկեր 2-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ ՀԱԱ կառուցվածքում վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության մասնաբաժինը կրճատվել է՝ 42.4%-ից հասնելով 38.4%-ի: Փոխարենը՝ նույն չափով ավելացել է տնտեսության համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների մասնաբաժինը ՀՆԱ-ում հասնելով 60%-ի: Սա նշանակում է, որ նոր ստեղծված եկամտի կեսից ավելին բաժին է հասնում ձեռնարկատերերին և միայն 1/3-ից փոքր-ինչ ավելին՝ վարձու աշխատողներին: Պետության մասնաբաժինն արտադրության և ներմուծման զուտ հարկերի տեսքով ընդամենը 1.3% է, որը 2007 թ.-ի համեմատ նվազել է 0.7 տոկոսային կետով: Հետևաբար՝ արտադրության և ներմուծման նկատմամբ կիրառվող անուղղակի հարկային եկամուտները ավելացված արժեքի ընդամենը 1.3%-ն են, այն դեպքում, երբ ԱԱՀ դրույքաչափը շատ ավելի բարձր է: Սա կարելի է համարել անուղղակի հարկերի և մասնավորապես՝ ԱԱՀ կիրառման անարդյունավետության ու տնտեսության մեջ մեծ ծավալի սուվերայնության առկայության վկայություն: Հարկ է նկատել, որ զարգացած տնտեսությամբ երկրներում վարձու աշխատողների, պետության և ձեռնարկատերերի մասնաբաժինը ստեղծված ավելացված արժեքում գրեթե հավասար է: Այս առումով, պետք է արձանագրել, որ վերջին տասնամյակում ՀՀ-ում տեղի է ունեցել եկամտի ձևավորման կառուցված-


¹ Գծապատկերը կազմել է հեղինակը՝ հաշվարկների հիման վրա: Աղբյուրը՝ Հայաստանի ազգային հաշիվներ՝ 2012, 2016, 2014, 2018:

քային անհամամասնությունների խորացում՝ ի վնաս վարձու աշխատողների և հոգուտ ձեռնարկատերերի:

Երկրի տնտեսության մեջ ձևավորված կառուցվածքային համամասնությունների վերլուծության կարևոր ուղղություններից է ՀՆԱ օգտագործման կառուցվածքի դիտարկումը: ՀՆԱ օգտագործման կառուցվածքի հիմնական բաղկացուցիչներն են վերջնական սպառմանն ուղղված ծախսերը, համախառն կուտակումը, ապրանքների ու ծառայությունների զուտ արտահանումը և վիճակագրական շեղումը (գծապատկեր 3):

Ներկայացված ցուցանիշներից երևում է, որ ՀՆԱ կառուցվածքում վերջնական սպառմանն ուղղված ծախսերը դիտարկվող ժամանակաշրջանում նվազել են՝ 2012 թ.-ի 98.1%-ից 2018 թ.-ին հասնելով 92.7%-ի, ինչը նշանակում է սպառման ծավալների կրճատում՝ խնայողությունների աճի հաշվին: Միաժամանակ, երկրում ստեղծված եկամտի 90%-ից ավելիի սպառումը վկայում է տնտեսության վերարտադրողական կարողությունների չափազանց ցածր մակարդակի առկայության մասին:

2012 թ.-ի նկատմամբ շուրջ 3 տոկոսային կետով նվազել է նաև համախառն կուտակման մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ 2018 թ.-ին կազմելով 22.4%: Դիտարկվող ժամանակաշրջանում էականորեն բարելավվել է ապրանքների և ծառայությունների զուտ արտահանման տեսակարար կշիռը ՀՆԱ կառուցվածքում՝ 2012 թ.-ի -20.8%-ից 2018 թ.-ին հասնելով -15.4%-ի:



Գծապատկեր 3. ՀՀ ՀՆԱ օգտագործման կառուցվածքը 2012-2018 թթ., %¹

Այսպիսով՝ անցած տասնամյակի ընթացքում ՀՀ տնտեսության մեջ արձանագրվել են ինչպես դրական, այնպես էլ բացասական կառուցվածքային գզալի փոփոխություններ:


ՀՀ տնտեսության կառուցվածքային կերպափոխությունների ինտենսիվությունն ավելի ակնառու դարձնելու համար գնահատվել է կառուցվածքային

¹ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ տվյալների բազա, <http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank1%20Economy%20and%20finance15%20National%20Accounts/EF-NA-4-2017.px/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6>

տեղաշարժերի ազդեցությունը տնտեսական աճի վրա: Տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը գնահատելու համար կիրառվել է հարաբերական կառուցվածքային տեղաշարժերի քառակուսային գործակիցը՝ ըստ որի առանձնացվել է կառուցվածքային տեղաշարժերի 3 համաթիվ.

- ԿՏՀ 1՝ ՀՆԱ արտադրության կառուցվածքը,
- ԿՏՀ 2՝ ՀՆԱ եկամտային կառուցվածքը,
- ԿՏՀ 3՝ ՀՆԱ օգտագործման կառուցվածքը:

Կառուցվածքային տեղաշարժերի առանձնացված համաթվերի փոփոխման միտումները ներկայացված են գծապատկեր 4-ում:



Գծապատկեր 4. Կառուցվածքային տեղաշարժերի առանձնացված համաթվերի շարժընթացը 1991-2018 թթ., %¹

Գծապատկերից երևում է, որ ՀՀ տնտեսության ճյուղային կառուցվածքի էական փոփոխություններ տեղի են ունեցել 1993 թ.-ին, որոնք պայմանավորված էին գյուղատնտեսության ոլորտի աճի բարձր տեմպով, ՀՆԱ-ում ծառայությունների մասնաբաժնի կրճատմամբ, սեփականաշնորհման և աշխատուժի՝ արդյունաբերությունից գյուղատնտեսության ոլորտ տեղափոխվելով, ինչպես նաև շինարարության ոլորտի էական կառուցվածքային տեղաշարժերով:

Կառուցվածքային տեղաշարժերի ԿՏՀ 2 համաթվի փոփոխման միտումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՆԱ օգտագործման կառուցվածքում առավել մեծ չափով կառուցվածքային տեղաշարժեր են արձանագրվել 1992 թ.-ին՝ պայմանավորված տնտեսության իրական հատվածում կատարված ներդրումներն արտացոլող համախառն կուտակման մասնաբաժնի կտրուկ նվազմամբ (1991 թ.-ի 39.7%-ի դիմաց՝ 1992 թ.-ին կազմելով 1.6%), և 2004 թ.-ին՝ պայմանավորված ապրանքների և ծառայությունների զուտ արտահանման տեսակարար կշռի զգալի բարելավմամբ (2003 թ.-ի 17.9%-ի դիմաց՝ 2004 թ.-ին կազմելով 14.7%):

¹ Գծապատկերը կառուցել է հեղինակը՝ հաշվարկների հիման վրա:

ՀՀ տնտեսության եկամտային կառուցվածքի տեղաշարժերի շարժ-
ընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ զգալի փոփոխություններ են տեղի
ունեցել 2006 թ.-ին՝ պայմանավորված արտադրության և ներմուծման զուտ
հարկերի մասնաբաժնի կտրուկ նվազմամբ. 2005 թ.-ի 10.3%-ից՝ 2006 թ.-ին
կազմելով 1.8%:

Տնտեսական աճի և կառուցվածքային տեղաշարժերի առանձնացված
համաթվերի միջև զույգային կոռելյացիայի գործակիցները վկայում են
դրանց միջև բավական նշանակալի կապի առկայության մասին (տե՛ս աղյու-
սակ 3):

Աղյուսակ 3

*Տնտեսական աճի և առանձնացված կառուցվածքային տեղաշարժերի
համաթվերի զույգային կոռելյացիայի գործակիցների մատրիցը*

	Իրական ՀՆԱ աճ	ԿՏՀ1	ԿՏՀ2	ԿՏՀ3
Իրական ՀՆԱ աճ	1			
ԿՏՀ1	-0.55	1		
ԿՏՀ2	-0.57	0.49	1	
ԿՏՀ3	-0.41	0.35	0.26	1

Աղյուսակի արդյունքներից կարելի է եզրակացնել, որ տնտեսության
ճյուղային կառուցվածքի վերափոխումները, որքան էլ տարօրինակ է, չեն
հանգեցնում տնտեսական աճի, և սա, թերևս, վկայում է ՀՀ տնտեսության
ճյուղային ոչ արդյունավետ կառուցվածքի մասին: Ուսումնասիրված համա-
թվերի ցանկում առավել մեծ չափով տնտեսական աճի տատանումը պայ-
մանավորում է ԿՏՀ 2-ը, սակայն հակառակ ուղղությամբ, ինչը կապված է
ՀՆԱ եկամտային կառուցվածքի տարրերի ոչ արդյունավետ համամասնու-
թյան հետ:

Այսպիսով՝ վերլուծության արդյունքներից ակնհայտ է, որ դիտարկվող
ժամանակաշրջանում ՀՀ տնտեսությունում տեղի են ունեցել զգալի կառուց-
վածքային վերափոխումներ, որոնք, սակայն, չեն նպաստել տնտեսության
մրցունակ կառուցվածքի ձևավորմանը:

Գրականություն

1. Եղիազարյան Ա., Հայաստանի տնտեսության կառուցվածքային վերլուծությունը
(հատվածային, զբաղվածության և եկամտային ասպեկտներ), «21-րդ ԴԱՐ», թիվ 3
(55), 2014, 27 էջ:

2. Полидуц А.А., Природа экономического роста и факторы, на него влияющие,
“Вестник”, Челябинск, 2015, N 11 (366), 115-119 с.

3. Schwab K., The Global Competitiveness Report 2016-2017, World Economic Forum,
Switzerland, 2017, p. 400.

4. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, ՀՀ ՎՎ, Երևան, 2018 թ. 592 էջ:

5. Հայաստանի ազգային հաշիվներ՝ 2012, 2016, 2014, 2018:

6. <https://www.armstat.am/am/>

7. <http://armstatbank.am/>

СУРЕН ШУШАНЯН

*Статистика, бакалавриат, 2-й курс***АНАЛИЗ СТРУКТУРЫ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА И СТРУКТУРНЫХ СДВИГОВ В АРМЕНИИ**

Ключевые слова: *структура экономического роста, структурные сдвиги, коэффициент эластичности, корреляционный анализ*

В данной статье были изучены особенности структуры экономики РА, проанализировано движение отраслевой структуры экономики РА за 2000-2018 гг. Для представления влияния структуры экономики на экономический рост рассчитаны коэффициенты эластичности, через которую оценивалась степень содействия экономическому росту секторов экономики. Кроме того, чтобы сделать интенсивность структурных изменений в экономике Армении более очевидной, было оценено влияние структурных сдвигов на экономический рост.

SUREN SHUSHANYAN

*2nd Year, Bachelor's Degree, Statistics***ANALYSIS OF THE STRUCTURE OF ECONOMIC GROWTH AND STRUCTURAL CHANGES IN ARMENIA**

Keywords: *structure of economic growth, structural shifts, elasticity coefficient, ratio analysis*

In this paper, the features of the structure of the Armenian economy are studied, the changes of the sectoral structure of the Armenian economy for 2000-2018 are analyzed. In addition, in order to increase the intensity of structural changes in the Armenian economy, the impact of structural changes on economic growth was assessed.

To represent the impact of the structure of the economy on the economic growth, a coefficient was calculated by which the degree of economic growth of economic sectors was estimated.